Սեկունդ	6	5	+ 1	3	
Հայ-լուսնոր.	484	280	+ 204	82	Պատյանա
Հայ-կաթոլ.	2	1	+ 1	1	Ենիկա-
Իոլամ	520	272	+ 248	94	
Հըեյտ	12	8	+ 4	7	Էրևան.
Ալե	—	1	- 1	1	
Գումար	1076	613	+ 463	200	Գубերն.
1903	(1000) (700)	+ 300	(220)		Հաշվարկված ե իմ կողմից
1904***	1024	748	+ 276	239	Օբզօր Էրիվ. ցւ.
1905	979	793	+ 186	180	» » »
1906	1178	747	+ 431	232	
1907	1312	837	+ 475	293	Պատյան. կողմ. Էրիվ. ցւ.
1908	1169	1026	+ 143	179	» » »
1909	1054	939	+ 115	183	Օբզօր Էրիվ. ցւ.
1910	1406	1229	+ 177	254	» » »
1911	725	616	+ 109	326	
1912	786	645	+ 141	222	
1913****	759	516	+ 243 (250)		Կավկաս. կալենդար.
1914	815	686	+ 129	309	» » »

\*) Մինչև 1887 թ. հարավոր չեղագ նյութեր հավաքել, միակ ակնարկ զետեղված ե „Կավկ. Կալենդ.“-ում, ըստ վորում 1850-ական թվերին տարեկան մահանում եղ մոտ 800 հոգի: \*\*) Խոլերայի համարակալ: \*\*\* Խոլերայից տառապել են 488 հոգի, մեռել են 375 հոգի: \*\*\*\*) Ամեն մի տարվան համապատասխան տարվա զրգում: \*\*\*\*\*) Փականագծերի մեջ նշանակված տմաւությունների թիվն իմ կողմից ե հաշվարկված:

Թվական	Տնտեսություն	Մահ	+/-	Հնդականից - 1	Անութերի հա- ջաքման աղբույրը
1915	799	1208	- 409	188	
1916	744	698	+ 46		«Ճերմակ ջարդից դեպի կարմիր շինարարություն»
1917	600	500	+ 100		
1918	520	809	- 289		
1919	420	920	- 500		
1920	500	600	- 100		
1921	700	800	- 100		
1922	771	580	+ 191		
1923	1911	630	+ 1281	550	«Խորհրդ, Հայոս, Թվերով»
1924	2064	804	+ 1260	613	
1925	2497	902	+ 1595	7'1	
1926	2724	1115	+ 1609	652	
1927	2881	1204	+ 1677	533	Կենտվիճակի մշտկունքներ.
1928	3091	1296	+ 1795	580	

Ինչ ենք տեսնում: Ազյուտակը չառ պարզ կերպով ցույց տալիս, վոր Յերեվան քաղաքը բնական աճման ասպարի- գում իրարից խիստ տարբերվող շրջաններ և առգենել:

1891 թվից մինչ 1914 թ., 24 տարվա ընթացքում, քա- ղաքը բնական աճում է ունեցել 3497 հոգի:

1915—1920 թվերին, վեց տարվա ընթացքում, բնական աճապում է ունեցել 1143 հոգի:

1921—1925 թվերին, Խորհրդային Իշխանության հաս- տատման առաջին 5 տարիներում, ունեցել է բնական աճում 4227 հոգի:

1926—28 թվերին, 3 տարվա ընթացքում, արդեն աճու- մը հասնում է 5081 հոգու:

Արդյունքը՝  
Նախախորհրդական 30 տարվա աճումը հավասար է 2354 հ.,  
Խորհրդային 8 տարվա աճումը հավասար է 7435 հոգու:  
Գտտերազմի և գաշնակցական շրջանի բնական նվազումը  
չի ամփոփում միմիայն վերոհիշյալ 1143 հոգու մեջ, — այդ  
վերաբերում և միմիայն «Ճերմանիկ» մահացածներին, այ-  
սինքն՝ յեկաղեցիների և սպահների ծխերի անդամներից  
մահացածներին, այն եւ՝ յենթագրական հաշվարկումներով,  
այնինչ մի հոծ մասսա մահանում ու թաղվում եր առանց  
չափաբերական մատյանների մեջ արձանագրվելու: Երանց  
դիմկենրը փոխադրում եյին Փուրդոններով և հարյուրներով  
թաղում միասին: Այդ մասին ավելի մանրամասն հետաքրք-  
րովովը կարսղ և բավարար նյութ գտնել իմ «Ճերմակ ջար-  
դից գեղի կարմիր շինարարություն» և Բ. Իշխանյանի «Տա-  
ռապանքի և աղետի աշխարհից» գրքերում:

Բայց ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել դաշ-  
նակցական շրջանի մահացման աղյուսակը\*)՝ կազմված  
Բախչի Իշխանյանի ղեկավարած վիճակագրական վարչու-  
թյան կողմից: (Տես աղ. № 10 էջ 34):

Նկատի ունենալով, վերը հիշված աղյուսակի թերու-  
թյունները, մանավանդ 7-րդ 8-րդ և 9-րդ սյունյակներում՝  
պետք է յենթադրել, վոր մահացածների թիվը կարելի յե-  
հաշվել 11.000 հոգի:

Այս բոլորը ցույց են տալիս, վոր մինչ Խորհրդային  
Իշխանությունը, Յերեվան քաղաքն աճել է միմիայն ի հա-  
շվի մեխանիկական աճման:

Մինչդեռ Խորհրդային շրջանը բնորոշվում է թե մեխու-  
նիկական և թե բնական աճումով:

\*) Առաջին անգամ Հրատարակված է 1925 թվի «Վիճակագրական  
Տեղեկատու» գրքում, էջ 17:

ՄԵՐԱԿԾՆԵՐԻ ԹԻՎԻ ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻՒՄ 1919թ.

Աղյուսակ № 19

Հ Ա Կ	ԱՄԻՍՆԵՐ	ԿԱՐԱԳԱՐԱՆՆԵՐ	Մ Ե Ա Կ Ի Լ Կ Ա Ն							
			Տիվական	Տիվական	Տիվական	Տիվական	Տիվական	Տիվական	Տիվական	Տիվական
1.	Հունվար	115	432	103	Տիվական	Տիվական	Տիվական	Տիվական	74	724
2.	Փետրվար	161	508	82	Տիվական	Տիվական	Տիվական	Տիվական	111	862
3.	Մ ա ր ա	125	238	79	37	Տիվական	Տիվական	Տիվական	125	604
4.	Ապրիլ	46	257	252	213	Տիվական	Տիվական	Տիվական	53	821
5.	Մայիս	12	225	123	354	Տիվական	Տիվական	Տիվական	19	733
6.	Հունիս	50	265	215	394	Տիվական	Տիվական	Տիվական	13	937
7.	Հուլիս	40	96	83	453	Տիվական	Տիվական	Տիվական	30	838
8.	Ոգոստոս	41	141	155	334	Տիվական	Տիվական	Տիվական	60	881
9.	Սեպտեմբեր	42	179	95	396	Տիվական	Տիվական	Տիվական	67	943
10.	Հոկտեմբեր	34	119	47	383	Տիվական	Տիվական	Տիվական	86	908
11.	Նոյեմբեր	22	54	30	304	Տիվական	Տիվական	Տիվական	81	579
12.	Դեկտեմբեր	7	61	30	458	Տիվական	Տիվական	Տիվական	131	1071
	Ամբողջ տարի	695	3015	3182	1444	544	171	850	9901	

7. ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԻ 100 ՏԱՐՎԱ ՄԵջ

ՅԱՅՎԱՓԵԼՈՎ Շ-ՐԴ Կ ՊՐԵՖԵՆՆԵՐՈՒՄ մեր մեջ բերած բացառությունները, ինչպես նաև ընթերցող հասարակությանը բավարարելու և գիտական հետազոտողների տշիւա-

տանքը հեշտացնելու համար, մեջ ենք բերում 100 տարվա ՅԵՐԵՎԱՆԻ բնակչություններ՝ ըստ տարիների կազմված՝ մեր կողմից կատարված հետազարձ հաշվարկումներով :\*) Այս հետազարձ հաշվարկման ժամանակ պահպանված են հաշվարկաների (աշխարհագիր, մարդահամար) տվյալները, իսկ ուղղում մացված ե զանազան աճնավորությունների կողմից կատարված հաշվարկումների մեջ, ինչպես նաև կատարված են հաշվարկումներ մեր կողմից այն թվականների համար, վորոնց մասին տվյալներ չեն յեղել :

1830-1873 տար շրջանի հաշվարկման համար մենք նկատի յինք ունեցել սպայմանական վերելք՝ 1830-1850, ապա մինչ 1854 թ., հետո նվազում՝ մինչ 1859 թ., ապա աճում՝ 1863, կրկին նվազում՝ մինչև 1873 թ.: 1897-1914 թ. ընդունել ենք ստորագրական աճման շրջան, ըստ վորում, 1914 թվի համար հիմք ենք վերցրել 32.000 բնակիչ:

1914-1916 տարեշրջանը համարել ենք արտակարգ քաղաքական պատճառներով աճման շրջան, ապա ընդունել ենք ստորագրական նվազում՝ մինչև 1922 թիվը :

1922-1926 թ. վերցրել ենք կենտրոնական հետազարձ հաշվարկման թվերը, իսկ 1927-1930 թվերի համար ընդունել ենք կենտրոնական կողմից կատարված պարզ հաշվարկման թվերը :

ԹԵՐԵՎԱՆ ուրիշներին հաջողվի ավելի մեծ ձևումներ մոցնել ենք կարգավոր մեջ զանազան պատճառական տվյալների հիման վրա :

\*) Հետազարձ հաշվարկում տաելով, պետք է հասկանալ հետազարդարական բնակչությունների, մարդահամարների տվյալների հիման վրա, ուղղել նախորդ մարդահամարից մինչ ավագ մարդահամարը միջնակալ տարբեների հաշվարկումները :

ՅԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ Ն 100 ՏԱՐՎԱ ՄԵջ

(Տարվելու և աշխատանքի մասին)

Աղյուսակ № 11

Առ 1-ն հուն- դարի	Բնակչու- թյան	Առ 1-ն հուն- դարի	Բնակչու- թյան	Առ 1-ն հուն- դարի	Բնակչու- թյան	Առ 1-ն հուն- դարի
1830 31	11.920 56	1855 57	13.200 81	1880 82	13.700 06	30,150
32	11.950	12.800	12.500	14.200	14.500	30,580
33	11.980	12.267	12.267	14.738	14.738	31.050
34	12.000	12.550	12.550	17.500	19,000	31,200
1835 36	12.020 61	1860 62	12.400 87	1885 88	16.000 11	31,320
37	12.100	12.700	12.801	19,000	20,000	31,490
38	12.150	12.700	12.700	21,000	1910 12	31,600
39	12.200	12.500	12.500	22,000	1915 13	31,700
1940 41	12.250 66	1865 68	12.600 91	23,000	1915 14	32,000
42	12.300	12.400	12.400	24,000	1915 16	35,000
43	12.350	12.300	12.300	25,000	1915 17	51,286
44	12.400	12.200	12.200	26,000	1915 18	51,000
1845 46	12.450 71	1870 72	12.100 96	27,000	1920 19	49,000
47	12.530	12.050	12.050	28,000	1920 21	45,000
48	12.550	11.938	11.938	29,006	1920 22	46,000
49	12.590	12.100	12.100	28,980	1925 23	47,521
1850 51	12.620 73	1875 76	12.300 99	28,877	1925 24	50,843
52	12.650	12.350	12.350	28,892	1925 26	54,667
53	12.800	12.400	12.400	29,000	1925 27	59,602
54	13.000	13.000	13.000	29,400	1925 28	64,699
	13.300	13.567	13.567	29,700	1925 29	68,847
		79	13.500	04	29,970	1925 75,493
				29,970	1925 86,126	

8. ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՃՄԱՆ ԹԱՓԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ  
ՄԵՐ ՊՈՎԱՅԻ ՀԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԵԼ ԱՏԱՆ

ՅԵՐԵՎԱՆ քաղաքի աճման տեմպն ավելի պարզ դարձնելու համար, անհրաժեշտ ենք համարում համեմատություն կոտորել Անդրկովկասի քաղաքների հետ:

Վ.	Քաղաքներ*	1830—34թ. Ժիւլիուս- Դաւիթի	1850 թ. Դաւիթի	1886 թ. 1897 թ. 1914 թ. 1923 թ. 1926 թ.	Աղյուսակ № 12				
1.	Ա. Աճած քաղաքներ ները (առանց հանքաբաշանի.)	Բագրատ (առանց հանքաբաշանի.)	3.893 11.581	7.431 34.988 11.744 1.061	86.611 78.445 24.230 22.643	111.904 159.590 30.616 32.476	248.812 344.629 51.316 57.917	244.900 233.958 48.086 45.300	347.390 294.044 42.313 48.196
2.	Բ. Աճած քաղաքներ հանքաբաշանի	Պէտրոս (հանքա- բաշանի.)	1.582 4.582	2.725 10.928	20.294 14.803	33.625 28.508	56.305 38.615	40.000 60.800	57.393
3.	Գ. Աճած քաղաքներ հանքաբաշանի**	Գյուղական բարեկառ	84.970 թյուրի 5.900	12.605 —	14.734 —	29.006 —	29.366 —	47.521 —	64.613
4.	Դ. Աճած քաղաքներ հանքաբաշանի***	Գյուղակառ	—	—	261.760	425.725	826.960	720.565	902.423
5.	Ե. Աճած քաղաքներ դաշտական քա- ղաքներ	Բ. Աճած քաղաքներ դաշտական քա- ղաքներ	5.059 5.566 5.864	12.724 19.568 12.374	26.806 22.139 16.116	25.881 20.007 15.357	42.568 12.527 23.924	7000 2100 10,200	5,104 3.665 12.338
6.	Զ. Աճած քաղաքներ հանքաբաշանի	Հ. Աճած քաղաքներ դաշտական քա- ղաքներ	—	—	—	—	—	—	—
7.	Շ. Աճած քաղաքներ հանքաբաշանի	Ջ. Աճած քաղաքներ դաշտական քա- ղաքներ	—	—	—	—	—	—	—

\* ) Քաղաքները շարունակ 1850 թ. գոյացրել են մասնաւություն 1853 թվականի:

\*\*) Գյուղական քաղաքները 1814 թվականի, ըստ ձեռարկի աթերթային տվյալների և 32.000 բնակչություն ունենալու հետեւ գյուղական քաղաքները համարվում են աղյուսակում:

(†) Անդրկովկասի կալենդար:

\*\*\*\*) 1923 թվականին Աղյուսակում պահպանվել են բնակչության վեցամյական պահպանական աղյուսակները:

Այս աղյուսակից տեսնվում է, զոր Անդրկովկասի մեծ քաղաքների շարքում 1886-ին Յերեվանը բռնում էր 7-րդ տեղը, այսինքն՝ ամենից փոքրն էր (այնինչ 1830-ական թվերին 2-րդն էր) և այդպես ել մնում է մինչև 1914 թ. համաշխարհայի պատերազմը:

1923 թվին նու գտանում է արդեն 5-րդ քաղաքը, իսկ 1926-ին՝ 3-րդը:

Միաժամանակ համեմատելով Թիֆլիսի, Բագվի և մյուս քաղաքների հետ՝ տեսնում ենք, զոր Յերեվանն ավելի արագ և աճել թե 40-ամյա շրջանում (1886—1926) և թե խորհրդային շրջանում:

**ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՃՈՒՄԸ**  
(Ամեն մի տարեցրջանի սկզբի բնակչությունն ընդունելով վորպես 100, տարեցրջանի վերջին՝ կունենանք):

Աղյուսակ № 13

Քաղաքներ	1886—1926	1897—1926	1914—1926	1923—1926
Մեջենը 7 քաղաքներին	345	212	109	125
Բագու	401	310	140	142
Թիֆլիս	375	184	85	126
Լենինական	175	138	82	88
Քոթայիս	213	148	83	106
Գյանջա	283	171	102	143
Բաթում	327	170	126	80
Յերևան	439	223	220	136

Ին չորես տեսնում էնք, Յերեվանը յուր աճման տեմպով բարձր և կանգնած վոչ միայն 7 քաղաքների միջից, այլ և առանձին քաղաքները վերցրած՝ միայն 1897—1926 շրջանին նա տեղի յի տալիս Բագվին: Խորհրդային շրջանն ել նա մենալագ աճող յերրորդ մեծ քաղաքն է Անդրկովկասում՝ Գյանջայից և Բագվից հետո: 1926—1930 տարեցրդ շրջանին Յերեվանն արդեն ամենաարագ աճող քաղաքն է (դատելով լրագրերում 1930 թվի ապրիլի 25-ի մարզահամարի նախնական ավագաների հրապուտակությունը), բայց թե Վերջնական ավագաներ չկան և թե մեզ անհայտ է մյուս քաղաքներում 1926 թվի դորքի քանակը վորպեսպի համապատասխան համեմատություններ կատարենք:

#### 9. ԱՊԱԳԱ ՅԵՐԵՎԱՆԸ

Յերեվանը Խորհրդային շրջանում աճել է տարեկան միլիոն 8,30 տոկոս:

Մինչին տարեկան աճումը 1923—1926 թ. յեղել է 8,93 տոկոս, իսկ 1926—1930 թ. 7,64 տոկոս, ընդունելով մարդահամարի թիվը, իսկ յեթե հաշվի առնենք Հայկենավիճակը անդրաբետապլանի հետ համաձայնեցրած հաշվարկումը, այդ դեպքում միջին տարեկան աճումը 1926—1930 թ. հասնում է նույնիսկ 9 տոկոսի: Յեթե յենթագրելու մինենք, զոր առաջիկա տարիներին Յերեվանն ելի աճելու յեռ կես տոկոս, այդ դեպքում հնդամյակի վերջին տառում—առ 1-ի հունվարի 1933 թ.՝ Յերեվանի բնակչությունը լինելու յեռ հարյուր հազարից ավելի:

Արդյո՞ք Յերեվանն ունի այլպիսի աճման շանսեր: Պետք է ասել, վոր այս: Յեկահամարի թե ինչու:

1. Քանաքեռի և ծրագրվող Սոլակի ու Յերեվանի 2-րդ հիղընկայանների ու զործարանների հիմնումը:

2. Դուերի վոստգման հետեւանքով Յերեվանի շրջապատճի ավելի խիտ բնակվելը և տնտեսական ուժեղ կառլը քաղաքի հետ :

3. Յերեվան—Սևվան յերկաթուղարձի կառացումը :

4. Կուլտուրական և ասովզագահական մի չարք նոր հիմնարկների հիմնումը ու հների ընդարձակումը :

5. Ծավալված կառացաղական աշխատանքները :

Ահա այս և այլ բազմաթիվ իրար փոխազդող պատճառների շնորհիվ պետք է յենթագրել, վոր Յերեվանի բնակչության տարեկան 8-9 տոկոսային աճումը դեմք հնդամյակում աղահաված է : Այսպիսով կունենանք՝

Մո. 1-ն հունվարի բնակչության թիվն ըստ պետպանի հաշվարկումների<sup>3)</sup>)

1931	93 · 877
1932	102 · 325
1933	111 · 534

Այսուղ մենք ավարտում ենք քաղաքի բնակչության ընդհանուր աճման բնույթագրումը և անցնում ենք դեմոքրատիկ և սոցիալական հատկանիշների համեմատական վերլուծման :

<sup>3)</sup> 1929 թվի հոկտեմբերին կատարված նախնական հաշվարկումով Յերեվան քաղաքի բնակչությունը, հիմնված հասցեների սեղանների արդյալների վրա, ընդունված էր 86·436, վորով և զքա հիմնա վրա կազմված են պահային թվերը :

## ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱ

### ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՑՆԵՐԸ

(Համեմատական և համադրական տվյալները)

#### 1. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՍԵՌԻ

Ժողովրդագրության հիմնական հարցերից մեկն է բնակչության դասավորումն ըստ սեռի :

Մասնիբազեն քաղաքային վայրերի համար այդ շատ քայլուչ հատկանիչ էր : Վորքան արական սեռի (մասնավորապես աշխատանքականի) ներկայությունը մեծ լիներ, այնքան այդ քաղաքն ավելի արդյունաբերական կենորոն էր համարվում : Բայց կապիտալիստական յերկրների քաղաքների այդ հատկանիչը խորհրդային քաղաքներում վորոշ չափով կորցնում է իր սրությունը, վորովհետեւ խորհրդային յերկրում կինն ամեն տեսակի իրավունքներով հավասար և աղամարդուն :

Խորհրդային քաղաքի յերկրորդ հատկանշական կողմնայն և, վոր այնուղ ամեն տիպի տնտեսական և կրթական հիմնարկներում ու ձեռնարկություններում կանանց համար վլչ մի սահմանափակում չկա, ինչպիսին դոյլություն ունի կապիտալիստական յերկրներում :

Այդ յերկու հատկանշական կողմերի վրա մեր ուշագրությունը պահելով՝ տեսնենք, թե ի՞նչպիսի փոփոխություններ ե կը կը Յերեվան քաղաքի բնակչությունը մեր ուսումնասիրության նյութ կազմող հարցուրամյակում :

ՍԵՐԵԲՐԻ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔ-  
ՔՈՒՄ ՀԱՐՑՈՒՐԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ

Աղյուսակ № 14

Թվական	Միջնական ընթացակարգ դիմում	Բնակչության դասավորումն ըստ սեռի			1000 արոտավայրի կազմության հարաբերականությունը
		Արական	Իգական	Գումարը	
1830	Մշտական	6135	5785	11,920	943
1859	»	6623	5644	12,267	852
1863	»	6901	5900	12,801	855
1873	»	6400	5538	11,938	865
1886	»	7823	6915	14,738	884
1897	Առկա	17,328	11,678	29,006	674
1914	»	15,693	13,673	29,366	871
1916	»	25,548	25,738	51,286	1007
1922	Մշտական	23,285	23,407	46,642	1007
1923	Առկա	23,386	24,135	47,521	1032
1926	» (առանց գորքի)	34,137	30,476	64,613	893
1930		41,104	38,293	79,397	932

1826-1829 թվականների սուս պարսկական և ոռություն քաղաքական պատերազմներից հետո, իգական սեռի տոկոսը ցածր էր Յերեվանում: Հետագա տարիներին այլ տոկոսն սկսում է իջնել: Մի յերեսուն տարի հետ հազար արականին իգական սեռի համեմատությունը 943-ից հասնում է մինչև 852-ի (1863 թ.), հետո կրկին բարձրանալով հասնում է 1886 թվին 884-ի: 1886 թվից հետո, ինչպես այս համար առաջին մասում տեսանք (էջ 29) քաղաքը տնտեսական գորքի առաջին մասում տեսանք (էջ 29) քաղաքը տնտեսական

Փակտորների աղյուսությամբ ոկտոբեմբեմ արագութեն աճել ե իհարկե, նախ՝ ի հաջով արական սեռի, վարով և իգականների հարաբերականությունը 865-ից իջնում է մինչև 674-ի, կամ այլ բառերով՝ յերկու տղամարդին դրեթե մի կին երմիայն հասնում:

1897 թվից մինչև 1914 թիվը քաղաքի աճումը զրեթե կանգ և առնում, կամ չափ թույլ և աճում, ըստ վորում իգական սեռի տոկոսը համեմատած անորոշ բարձրանում է և զրեթե հասնում 1886 թվականին: 1886 թվին 1000 արականին հասնում էր 884, իսկ 1914-ին՝ 871 իգական:

Համաշխարհային պատերազմի սկզբից իսկ սեռերի փոխհարաբերականությունը բոլորովին այլ կերպարանք և ստանում: Արական սեռի դիմուրացու հասակը քշվում է գեղագիտական դրանց փոխարեն գալիս են թուրքիայից յեկած փախտականները, մեծ մասամբ իգական սեռից: Այդ և պատճառը, վոր 1916-ին 1000 արականի գիմաց արդեն ունենք 1007 իգական և միշտ նույն համեմատությունը պահպանված ենք գանում նաև 1922 թվին: 1923-ին իգական սեռի կոյշեֆիցին արդեն դասնում է 1032, վորից հետո կրկին սկսում է տեղատվություն:

Ծնորհիվ քաղաքի արագ աճման և նոր գործարանների հիմնան ու արդյունաբերության ծավալման, արականների տոկոսը կրկին սկսում է աճել և 1926 թվին 1000 արականի գիմաց ունենում ենք 892 իգական: 1930 թ. ապրիլին իգականների տոկոսը բավականին բարձրացած ենք տեսնում, բայց դա առյերելվություն է: Չնայած կանացի աշխատանք պահանջող մի շարք գործարանների (մետաքսի, կարի, ծխախոտի և այլն) հիմնման, այնուամենայնիվ 1930 թվին տղամարդկանց աճման թափն ալելի մեծ յեղել, մասնաւորապես չնորհիվ կառուցող բանվորների մեծ կուտակման, և յեթե նկատի ունենանք վոր 1926 թվին զորքը հաջվի առնված է, իսկ 1930 թվին վոչ:

1926թ. 1830 և 1930 թվերի հետ համեմատության դընելու համար, պետք է 1926 թվի բնակչությունից հանենք փորապես շնորհիվ կառուցող բանվորների մեծ կուտակման։ Պորքը, վորովհետեւ զորքը 1830 և 1930 թվերի բնակչության մեջ չի մտել։

Այդ գեղքում	1000 արականին	հասնում է իզական՝
1830 թվին	943 հոգի	
1926 թվին	964 հոգի	
1930 թվին	932 հոգի։	

Առանձին ազգերի մեջ սեռերի հարաբերականություններուայտվում և հետեւյալ կերպ (վերցնում ենք միայն կարելոր տվյալներ ու ճշգրտված թվականները)։

### ՍԵՐԵԲԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՏ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Աղյուսակ № 15

Տարբերակ	Հայ		Թուրք		Այր		Հնդամենը	
	Արդարան	Խզական	Արդարան	Խզական	Արդարան	Խզական	Արդարան	Խզական
1830	2386	2203	3749	3582	—	—	6135	5785
1886	3827	3315	3797	3431	199	169	7823	6915
1897	7331	5192	6940	5419	3057	1067	17328	11678
1922	20115	20281	2553	2571	567	555	23235	23407
1926	30302	26957	2590	2378	1245	1141	34137	30476

Այս աղյուսակը վերածելով հարաբերական թվերի՝ տեսնում ենք, վոր նույն յերեվայի թները, ինչ վոր տեսանք բնակչությունից պարբեր չեն սեռերի հարաբերականությունը ՅԵՐԵՎԱՆ քաղաքում համեմատության գնել Անդրկովկասի և այլ մեծ քաղաքների հետ ։

ՀԱՐԵՄ լնելանուր կազմի դասավորությունն ըստ սեռերի քննարկելիս, արտահայտվում են նաև առանձին աղդությունների մեջ։

### ԱՄԵՆ ՄԻ ԱԶԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ 1000 ԱՐԱԿԱՆԻՆ ՎՈՐՔԱՆ ԻԳՐԱԿԱՆ Ե ՀԱՄԱՅՆԻՄ ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Աղյուսակ № 16

Տարբերակ	Հայ	Թուրք	Այր	Գումարը
1830	923	955		943
1886	866	903	830	884
1897	708	781	349	674
1922	1008	1007	979	1007
1926	890	918	916	899

Մի կողմ թողնենք «այլ» ազգերը, վորոնք քանակավեսքի լինելու հետեւյանքով շատ մեծ զիգզազներ են տալիս։ Հայերի և թուրքերի համեմատականությունը ցույց է տալիս, վոր հայերի մեջ արական սեռի գերազանցությունը հանգեց խզականի բոլոր տարեթվերին ել շատ ավելի ուժեղ և արտահայտված, քան թուրքերի մեջ։ միակ, և այն ել 1000 անձին մի հոգու տարբերությամբ, բացառություն է կազմում 1922 թիվը։

Հետաքրքրությունից զուրկ չի լինի սեռերի հարաբերականությունը ՅԵՐԵՎԱՆ քաղաքում համեմատության գնել Անդրկովկասի և այլ մեծ քաղաքների հետ ։

1000 ԱՐԱԿԱՆԻՆ ԳԱԼԻՍ Ե ԻԳԱԿԱՆ՝ 1897 ՅԵՎ. 1926 ԹՎԻ  
ՏՎՅԱԼՆԵՐՈվ

Աղյուսակ № 17

Քաղաքներ	1897	1926	Քաղաքներ	1926
1. Յերևան	674	892	1. Մոռկվա	1047
2. Բաթում	395	866	2. Լենինգրադ	1059
3. Լենինական	607	941	3. Խորկով	1064
4. Քութայիս	669	977	4. Տաշքենդ	940
5. Բագու	673	938	5. ՀՍԽՀ	963
6. Թիֆլիս	676	996	6. Անդրկովկաս	948
7. Գյանձու	784	878	7. ԽՍՀՄ	1069
8. Անդրկովկասի բուրուր քաղաքները միասին *)	703	936	8. ԽՍՀՄ-ի քաղաքային բնակչութ.	1037

Քաղաքային բնակչության մեջ, ինչպես տեսնում ենք այս աղյուսակից արական սեռի գերակշռությունն ամեն տեղ ել բացահայտ ե. միաժամանակ՝ մի քաղաք վորքան ել հոծ բնակչություն ունենա, այնքան ավելի նա մոտենում ե իր համապեսության միջին կոյքից ենոներին, որինակ՝ Մոսկվա, Լենինգրադ, Խարկով, Բագու, Թիֆլիս և այլն։ Մեջակ և փոքր քաղաքներն ավելի յենթակա յեն յելեզեջների, համաձայն իրենց աճման տեմպերի։ Այսպես. 1897 թվին ա-

\*) «Անդրկովկասի բուրուր քաղաքներն ի միասին» 1897 թվի համար վերցված են Բագու, Յելիզավետոպոլ, Թիֆլիս, Քութայիս և Յերևան համագների քաղաքային վայրերը։

քական սեռի գերակշռության տեսակետից Գյանջան Անդրկովկասի 7 քաղաքներում ամենահետին տեղն եր բոնում, իսկ 1926-ին՝ ընդհակառակը, Բաթումից հետո առաջին տեղը։ Յերեվանը 1897-ին գրավում եր 5-րդ տեղը, իսկ 1926-ին՝ արդեն 3-րդ տեղը։

Այս աղյուսակի 2-րդ հատկանշական կողմն այն է, զոր թրոքութաթարական ազգություններով բնակված քաղաքներ։ բում արական սեռի համեմոտական գերակշռությունը միշտ ավելի յե աչքի ընկնում, թեև № 14 և 15 աղյուսակներից յերեվում ե, վոր հայերը միշտ ել չեն հետ մնում թրոքութաթարական ազգություններից։ Յեշ ընդհակառակը, ուղարկունական ազգություններով բնակված շրջաններում ու մեծ մասմբ նաև քաղաքներում իդական սեռն ե, վոր գերակիրշում է։

2. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏԱԶՈՂԻ ԹՅՈՒՆՆԵՐԻ

Ժողովրդագրության կարեվոր հատկանիշներից մեկն ել բնակչության ըստ ազգությունների գասավորման խնդիրն ե։ Այդ հարցը Անդրկովկասի սեռ բազմազան ազգություններով բնակված մի յերեսում ել ավելի կարեվոր և դառնում։

Յերեվան քաղաքի վերաբերմանը գանազան տարեթվերին բնակչության գասավորումն ըստ ազգությունների տալիս ե մեզ հետեւյալ աղյուսակը։

Հայերը միշտ եւ կազմել են միաձույլ ազգություն։ միայն 1830-ին յեղել են հայ-բոշաներ քաղաքի կոնց թաղամասում, բայց Շոպին իր գումարային տվյալներում նրանց միշտ եւ հայերի հետ և հաշվել։ Հետագայում այլևս բոշաների մասին վոչ մի վիճակագրական հիշատակության շնորհանդիպում, յեթէ հաշվելու ընթացք, վոր 1926-ին ՀՍԽՀ-ում արձանագրված են 23 բոչ, իսկ Յերեվան քաղաքում և վոչ մեկը։

«Թյուրքեր» հասկացողությունն անընդհատ եվոլուցիայի և յենթարկված։ 1830 թվին նրանք հիշատակված են վրաբես «Խումամներ» վորով այդ խմբի մեջ համախմբված են յեղել թյուրքը, ոսմանցի թյուրքը, պարսիկը, քյուրդը, թաթարը և այլն։ Հետագա տարեցներին, մինչև համաշխարհային պատերազմի վերջը, նրանք կոչվել են «թաթուներ» վորով նախորդ խմբից գուրա են մնացել պարսիկները, քրդերը և այլն։ Խորհրդային շվանի սկզբներին 1922 թ. վիճակաղբության մեջ նրանք կոչվել են «թրքո-թաթարներ» վորովհետեւ նկատված ե, վոր թաթար տերմինը սիալ է, և յոզգուրդը հաճախ սիալ ցուցմունք է տվել։ Դողովրդի մի կարեվոր մասը, ցույց ե տվել «թաթար», իսկ մյուսները «թյուրք»։ Վերջապես, 1926 թ. մարդահամարի ժամանակ Գյումրիության Ակադեմիայի ազգությունների դասակորման սկզբունքով թյուրք հասկացողության տակ միայն լնդունվել էն տեղացի թյուրքերը։

Խուսների խմբի մեջ առաջներում խմբավորում ելին նաև ուկրայնացիներին և բելոռուսներին, իսկ հետագայում՝ միայն ռուսներին։

Ոյս բացատրությունից հետո անցնենք աղյուսակի պարզաբնման։

1830 թ. Յերեվան քաղաքում թյուրքերը կազմում եյին բացարձակ մեծամասնություն, 1886 թ. միայն համեմատական մեծամասնություն։ 1897-ին արդեն հայերն են կազմում

Տարեթիվ	Ա.Մ. Ա. Մ. Ա. Բ. Ա. Բ.					
	Հայ	Թյուրք	Ռուս	Ալբ	Պ. Ա. Ա. Բ.	Պ. Ա. Ա. Բ.
	Բացարձակ	%	Բացարձակ	%	Բացարձակ	%
1830	4589	88,50	7331	61,50	-	-
1886	7142	48,46	7228	49,04	313	2,13
1897	12523	43,17	12,359	42,61	3171	10,93
1914*	15531	52,89	11,500	39,16	1628	5,54
1922	40396	86,61	5,124	10,99	914	1,96
1926	57259	88,62	5,109	7,91	1218	1,88
					1027	1,59
						64,613
						100

ԱՀԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃՄԱՆ ՏԵՇՊՐԸ ՅԵՐԵՎԱՆԻ ԹԻՎԻ

Ապրիլակ մթ 19

Տարեցուանի մեռդրվածքի հաշվարկան	Տարեցուանի մեռդրվածքի հաշվարկան	Ա ճ Ռ Ա Ռ		Ա Ռ Ա Ռ Ա Ռ		Կոչումների %
		Տ ա ր է թ ա բ ն ա ն է	Թ յ ո ւ ր ք	Ա յ լ ք	Ա յ լ ք	
		Կոչումների %	Կոչումների %	Կոչումների %	Կոչումների %	Կոչումների %
1830—1886	56	2,553	55,6	-103	-1,4	368
1886—1897	11	5,381	75,3	5131	71,0	3756
1897—1922	25	27,873	225,6	-7285	-58,5	3002
1922—1926	4,5	16,863	41,7	-15	-0,3	1123
1926—1930	3	—	—	—	—	—

Հայրյուր տարվա ընթացքում հայերը հետպհետեւ, բայց աստիճանաբար ավելի արագ են աճել, իսկ թյուրքերի աճումը ավել է միշտ նվազում, բացառությամբ 1886—1897 տարեցրանին, յերբ նրանք ունեցել են շատ ուժեղ աճում, բայց, ի հարկե, ավելի թույլ, քան հայերին: Ռուսների և այլ ազգերի մեջ աճման վիզվագները շատ ավելի մեծ են յեղել:

Թյուրքերի 15 հոգով աննշան նվազումը 1922—1926 թւ. վին ուետք ե բացատրել գլխավորապես նրանով, վոր նախորդ ձրջանում, ազգամիջյան կոլիզների հետեւանքով, քաղաք ապաստանած վյուղացի թյուրքերը դիմում են դեպի իրենց մշտական բնակավայրերը, ինչպես նաև նրանով, վոր թյուրք մտավորականությունը թե աշխատելու և թե բարձրակույն կրթություն ստանալու համար դեպի Աղբքեջան և դիմել:

Հայերի աճման կոյեփիցինուը միշտ ել միջին աճման կոյեփիցինուից բարձր ե յեղել, բացառությամբ 1886—1897 թ.։

Այդ բոլորից հետո հոծ պարսկական-թրքական բնակչություն սւնեցող քաղաքը 100 տարուց հետո դաւնում ե հոծ հայարհակ:

Ահա տոկոսները:

Հայեր	Թյուրքեր
1830-ին	38,5
1926-ին	88,6

Պետք է նշել նույնպես, վոր հայերը Յերեվանում, 1926 թվի տվյալներով, կազմում են 88,6 տոկոս, մինչդեռ ՀՍԽՀ մէջ՝ միմիայն 84,5 տոկոս:

Ազգությունների վերաբերյալ մեր խոսքն ավարտելուց առաջ, անհրաժեշտ ենք դոնում տալ Յերեվան քաղաքի ազգությունների մանրամասն ցուցակը՝ 1926 թվի մարդահամարի տվյալներով: Ազգերի հերթը վորոշված է ըստ իրենց բազմամարդության:

**ՅԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ՀՍՏ ԱԶԳՈՒԹՅՈՒՆ-**  
**ՆԵՐԻ 1926ԹՎԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐՈՎ**

**Աղյուսակ № 20**

Հ	ԱԶԳԵՐ	Խորհրդային քաղաքացի- ներ	Ուստուահպա- տակներ	Գումար
1.	Հայ .	57.259	320	57.579
2.	Թուրք	4.968	101	5.069
3.	Ռուս	1.127	—	1.127
4.	Պարսիկ	141	178	319
5.	Վրացի	91	—	91
6.	Ասորի	78	8	86
7.	Ռէկայնացի	67	—	67
8.	Հբեյյա	80	1	61
9.	Լ և հ	45	—	45
10.	Գերմանացի	38	1	39
11.	Քյուրդ	38	—	38
12.	Բելուսուս	23	—	23
13.	Հույն.	22	1	23
14.	Յեղցի	18	—	18
15.	Ֆրանսացի	5	3	8
16.	Լատվիացի	3	—	3
17.	Չեխոսլովակի	3	—	3
18.	Բաթար	2	2	2
19.	Իտալացի	—	—	—
20.	Ռւսի.	2	—	2
21.	Ֆ ի ն	—	—	—
22.	Լուգացի	1	—	1
23.	Չին	1	—	1
24.	Ինգրի	1	—	1
25.	Ղազախ	1	—	1
26.	Մորտվա	1	—	1
27.	Ո ս .	1	—	1
28.	Շվեյց. ցույց չտված	1	—	1
29.	Ազգութ. սիալցույց տված կամ սիալցույց տված	4	—	4
	Գումարը	63.998	615	64.613

Այսպիսով՝ Յերեվանում բնակվող ազգերի թիվն է 28, լոլոնցից միայն 3-ն են 1000-ից ավելի շունչ ունեցող, մեկը՝ 100-ից ավելի 10-ը տասնյակներով, իսկ մնացած 14 ազգերը միավորներով են ներկայացված :

**3. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ**

Բնակչության դասավորումն ըստ տարիքային կազմի այն հիմնական հարցերից մեկն է, վորով պարզվում են աշխատանքական գործոցական համակի և այլ մտասաները։ Քաղաքացին լնակչության մեջ 20—50 տարեկան մարդկանց թվի շատությունը բնորոշ նշաններից մեկն է այդ քաղաքի արդյունաբերական կամ կենսունակ լինելուն։

Բնակչության տարիքային կազմի համեմատականությունը մենք կարող ենք կատարել միայն 3 հրազդարակված մարդահամարների տվյալներով։

**ՅԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ՀՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ**

**Ա. Բացարձակ բվերով**

**Աղյուսակ № 21**

Տարիք	1897		1922		1926	
	Արական	Իգական	Արական	Իգական	Արական	Իգական
0	386	343	248	235	1183	1169
1—4	1438	1563	1576	1500	3810	3574
5—7	1020	921	1369	1265	1504	1400
8—9	615	544	1271	1060	760	731
10—11	597	490	1635	1516	952	746
12—14	1131	756	3064	2305	2621	2065
15—19	1747	1106	2452	2486	3937	3712
20—24	3220	1096	1264	2212	5019	3410
25—29	1815	1059	1865	2332	3081	3101
30—39	2430	1691	3484	3584	4618	4350
40—49	1520	979	2470	2000	3393	2501
50—59	853	641	1365	1519	1590	1778
60—69	388	343	764	945	1007	1290
70—79	115	104	309	308	377	445
80—89	29	29	78	106	87	145
90—99	7	8	14	23	24	39
100 և առ-						
գլի	2	4	5	8	4	11
Անհայտ	5	1	2	3	170	9
Գումար	17.328	11.678	23.235	23.407	34.137	30.476

Արական սեռի 1926 թվին 270 հոգով տնհայտ տարիքի արձանագրվելու պատճառն այն է, վոր աներում յեղած ժամանակավոր հյուրերի տարիքները անեցիները չեն կարող տցել ճիշտ ցույց տալ ցուցակագրողներին:

Ներկա աղյուսակը վերլուծության յենթարկելու համար, նախ և առաջ անհրաժեշտ է տոկոսային հարաբերականություններ ունենալ:

Այդ մենք տալիս ենք № 21 աղյուսակով, վորի մեջ հաշվառումից դուրս ենք հանում անհայտ տարիք ունեցողներին, իսկ մնացյալները վորոշ խմբավորումների յենք յենթարկում:

### ՉԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ՀՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ

#### Բ. Համեմատական տվյալներ

Աղյուսակ № 22

Խմբավորում	Տարիք	Արական			Իդական		
		1897	1922	1926	1897	1922	1926
Նորածիներ	0	2,23	1,07	3,48	2,94	1,01	3,84
Ցերեխաններ	1-4	8,30	6,79	11,22	13,38	6,41	11,79
Մանկապարտեզայիններ	5-7	5,89	5,89	4,43	7,89	5,41	4,60
Դպրոցական հասակ	8-11	7,00	12,51	5,04	8,85	11,01	4,85
Գտանիններ	12-19	16,61	23,74	19,31	15,95	20,46	18,96
Չափահաններ	20-59	56,85	44,97	52,11	46,81	49,76	49,69
Շերունիններ	60+ տ-վերի	3,12	5,03	4,41	4,18	5,94	6,33
Գումար	-	100	100	100	100	100	100

Նորածինների ու յերեխնաերի 1926 թվին մեծ տոկոս

կազմելու առաջուցներից մեկն և մեր բնական մեծ աճ տան:

Ինդհակառակ 1926 թվին չատ թույլ են ներկայացված մանկապարտեզային և դպրոցական հասակի յերեխանները, վորովհետեւ նրանք 1914—1920 թվի սերունդն են, վորոնց սակավությունը վոչ միայն քիչ ծնունդների, այլ և այլ տարիների հասուլ մեծ մահացման արդյունք է:

Մեացած խմբավորությունների մոտ 1926 թիվը կազմում է գրեթե մեջին մեծություն՝ 1897-ի և 1922-ի միջև: Պատերազմի չնրբհիվ տաղացած աննորմալությունները, վորությունը առաջին 1922 թիվը, 1926 թիվը դիմում և դեսպի նորմալ կյանքը:

1922 թվին 20—40 տարեկան իզականների բացառիկ գերազանցությունը ազամարդկանցից արդյունք եր պատերազմի և քաղաքացիական կոիվների ընթացքում տղամարդկանց վոչնչացման, վորով և ընդհանուր բնակչության մեջ ևս գերակշռությունն անցնում է կանանց կողմը, չնայած, վորանկական հասակում արական սեռն եր, վոր գերակշռում եր:

1930 թվին (առանց զորքի) 0-7 տարեկանները ՅԵՐԵՎԱՆՈՒՄ կազմում եյին 22,73 տոկոս, մինչդեռ 1926 թվին նըրանք 20,17 տոկ. եյին, 8—11 տարեկանները 1930 թվին 5,33 տոկ. եյին, իսկ 1926 թվին 4,85 տոկ.: 1930 թվի տոկունների բարձրացման մեջ անշուշտ յուր վորոշ տեղն ունի դորքի ներկայությունը 1926 թվի տվյալների մեջ: 1930 թվի մյուս տարիքային խմբավորումները տուննձին մշակված չըլինելով՝ հնարավորություն չունենք համեմատելու:

Կարեվոր ենք համարում մեջ բերել նաև տարիքային կազմը, ըստ աղբաւթյունների: Միայն վորապես վոչ հատկանշական, 1922 թիվը գուրս ենք թողնում, իսկ տարիքային խմբավորումներն ավելի մեծացնում ենք ու տալիս ենք միայն համեմատական թիվերը:

ԲՆԱԿ ՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՀԱՄԱՐԴԱՅԱՅԻՆ ԽՄՐԻԴԱՅԱՅԻՆ ԽՄՐԻԴԱՅԱՅԻՆ ԽԵՐԻ ՅԵՎ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 100 ՄԵՋԻՆ

Տարբառականին Խմբավորություն	Սեռ	Հայեցածություն		Պայմանը		Արտադրություն		Գումարը	
		1897	1926	1897	1926	1897	1926	1897	1926
0—19	Աղքաղաքան Հայական Սիստեմին	45,82 49,35 47,28	43,57 44,01 43,78	43,33 49,09 45,85	47,18 47,64 47,40	18,58 46,96 25,92	27,39 35,06 31,06	40,02 49,01 43,63	43,26 43,96 43,59
20—59	Աղքաղաքան Հայական Սիստեմին	50,59 45,51 48,49	51,68 49,61 50,71	53,20 47,44 50,68	45,72 45,25 45,50	80,05 49,86 72,24	68,84 60,56 64,88	56,83 46,80 52,80	51,86 49,68 50,88
60 առ. և ավելի	Աղքաղաքան Հայական Սիստեմին	3,59 5,24 4,23	4,75 6,38 5,51	3,47 3,47 3,47	7,10 7,11 7,10	1,37 3,18 1,84	3,77 4,38 4,06	3,15 4,19 3,57	4,89 6,36 5,58
	Համամական	100	100	100	100	100	100	100	100

Հայերի մեջ աշխատանակ տարիքը 1926-ին այլին աւելի է արտահայտված, այսինչ թյուրքերի մեջ լողհակառակի թուրքեր են, գորովհետեւ, ինչու լիբերալներ բա-

ցատարեցինք, մինչ 1926 թվականը գեղի հորհրդային Ազգային եյլին գիմում բոլոր թյուրք մատավորականները :

Այլ ազգերի մեջ 1897 թվին արական սեռի չափահասների ծայրահանելու ուժամատումը հետեւանք և զրոքի ներկայության :

Միաժամանակ՝ 1926 թվին իզական չափահասների մեջ ձգտում և նկատվում արական սեռի կոյքֆիենցետներին մոտենալու, ինչ վոր բացատրվում է 1926 թ. կանանց աշխատանք ունենալու մեջ հնարավորություններով :

Տարիքային կազմի մասին մեր խոսքը վերջացնելուց առաջ, անհրաժեշտ է մի վոքք համեմատություն կատարել Անդրկովկասի այլ քաղաքների հետ :

Համեմատության համար մենք վերցնում ենք միմիայն 20-ից 59 տարիքը (չափահասությունը) և մեջ հեք բերում միմիայն համեմատական թվերը :

ԶԱՓԱՇԱՍ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՈՂՈՍՈԼ՝ ԱՆԴՐԿՈՎԿԱՅԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Ազյուսակ № 24

Հաղաքները	1897	1926			
		Արական	Իզական	Արական	Իզական
Յերևան	56,83	46,80	51,85	49,68	
Լենինական	63,56	41,92	49,60	37,83	
Թիֆլիս	58,95	49,17	56,98	54,25	
Քութայիս	49,56	44,37	49,61	47,96	
Բաթում	72,65	51,31	59,00	54,57	
Բաքու	61,13	51,88	55,96	52,70	
Գյանջա	48,31	44,41	47,17	45,92	
	ՀԱՆՑ	44,03	43,00	40,85	42,92

Գետք և չեշտել, վոր Անդրկովկասի մեծ քաղաքներում չափահաների տոկոսը արակաների մեջ բոլոր քաղաքներում, բացառությամբ մեկի 1897-ին ավելի բարձր է յեղել քան 1926 թ.: Իդական սեսի մեջ ընդհակառակը, մեկի բացառությամբ, բոլոր քաղաքներումն ել բարձրացել է: Դրան կարելի յե հետեւյալ բացարձություններ տալ:Ա. 1926-ին Անդրկովկասի քաղաքները զեր նոր ելին դուրս յեկել քայլաման շրջանից և Համշխարհային յերկարատե պատերազմից: Բ. Խորհրդային Խշխանության հաստիկ ուշադրությունը՝ Հանդեղի իդական սեսի և մեծ հնարավորությունները կանաց աշխատանք գտնելուն: Գ. Խորհրդային շրջանի մեծ բնական աճումը, վոլոտես նորմալ յերեվույթ հետպատերագիտան շրջանների և վորքերի նվազ մահացումը՝ առողջապահական միջոցների կիրառման հետեւյանքով:

1897 թվին արական սեսի մեջ ամենաբարձր տոկոսը պատկանում էր Բաթումին (Նավահանգիստ), իսկ կանաց մեջ՝ Բաքվին, թեև Բաթումը՝ միայն կես տոկոսով և հետ մընում:

1926 թվին, թե արական և թե իդական սեսի մեջ ամենաբարձր տոկոսը պատկանում է Բաթումին, թեև այդ տոկոսները մի քիչ ավելի ենել են, քան 1897 թիվը:

Յերեվանն արական սեսի մեջ 1897-ին զրավել էր 5-րդ, իսկ 1926-ին՝ 4-րդ տեղը: Իդական սեսի մեջ, թե 1897-ին և թե 1926-ին գրագիւղ է 4-րդ տեղը:

Բոլոր գեղքերում ել Յերեվանի չափահաների տոկոսը միշտ բարձր է յեղել ՀՍԽՀ-ի համապատասխան տոկոսներից:

#### 4. ԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԹԻՎԻ ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Յերեվան քաղաքի գրագետների թիվը աճման համար մենք հին ավյալներ շունենք:

Ամենահին ու լրիվ ավյալները միայն 1897 թվին են վերաբերում:

Վորքան գրադեաներ կային սրանից 100 տարի առաջ, գժվար և պարզել: Համենայն գետը պետք է յենթագրել, վոր Յերաբայան գաշտի կենտրոնական քաղաքում պետք է կենտրոնացված լիներ այն ժամանակից զրագետների մեծագույն թիվը:

Այդ շրջանին, մենք Յերեվան քաղաքում նույնիոկ գըպլոցներ չենք ունեցել: Ամեն մի քահանա կամ մոլլա յեկեղեցում կամ մզկիթում իր շուրջն եր հավաքում մի քանի հոգի և ասրիների լնթացքում նրանց սովորեցնում եր ավելացան կամ դուռան կարգալ:

Բայ Շաղինի, նախ քան 1827 թ. ուռւենրի կողմից Յերեվանի գրավումը, պարսիկների տիրապետության ներքո Յերեվանում սովորում ելին:

Յեկեղեցիներին կից	80 հոգի,
-------------------	----------

Մզկիթներին կից	200 հոգի
----------------	----------

<hr/> Էնդամենը*) 280 հոգի:	
----------------------------	--

Առաների տիրապետությունից հետո 1830-ական թվականներին Յերեվանում և Նախիջեվանում հիմնվեցին յերկու ծխական զպրոցներ՝ մոտ 8 ուսուցչով և 60 աշակերտով, վորոնցից մոտ 50-ը հայեր ելին, իսկ 10-ը թյուրքեր:\*\*):

Այս յերկու տվյալները հիմք ունենալով՝ կարելի յե յենթագրել, վոր 1830-ական թվերին հազիվ 400 դրագետ լիներ Յերեվան քաղաքում. ուրեմն, բնակչության հազիվ 3,5 տոկոսն եր գրագետ:

Ինչպես ասացինք, գրագիտաւթյան մասին միակ պիճական հիմնական ազբյուրն ունենք 1897 թիվ ավյալները՝ նրանից հետ յել գրագիտության մասին ունենք միայն 1922 և 1926 թվերի ավյալներ: Գրագիտաւթյունը հետազոտ-

\*) Շաղին էջ 903:

\*\*) Շաղին էջ 902:

ԳՐԱԳՐԱՑԻՆԻ ԹԻՒՐԻ ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻՒՄ

Ակն և տարիք	1 8 9 7		1 9 2 2		Ացուսակ № 25	
	տղեազգ	մոյրաց	տղեազգ	մոյրաց	տղեազգ	մոյրաց
ա. Ալբական						
0—7 տառելեւան	88	2756	2844	3018	3193	78
8 և ավելի	6516	7968	14484	12793	7249	20042
Գումար	6604	10724	17328	12968	10267	23255
բ. Կագախ						
0—7 տառելեւան	58	2769	2827	167	2833	3000
8 և ավելի	1938	6913	8551	9217	11190	20407
Գումար	1996	9632	11678	9384	14023	23407
գ. Յեղակու սեսի						
0—7 տառելեւան	146	5525	5671	342	5851	6193
8 և ավելի	8454	14881	23335	22010	18439	40449
Գումար	8600	20406	29006	22352	24290	46642

Ինչպես այս աղյուսակն էլ պարզ ցույց է տալիս, գրագրության կոյժիցենաները հաշվելիս չողեազգ է նկատով ու նենալ 0—7 տարեկանները, վորոնք գործոցական տարիքը հասած չլինելով՝ բնականորեն անգրագետ ելին մնում, հաղորդությունը բացառություններով։ Աւսորի և գուրս թողնելով այդպիսիներին՝ վերցնենք 8 և ավելի տարիքն ու հարաբերական թվերի վերածենք։

ԶԵՅ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 100 ԱՆՁԻՆ ԿՐԱԳԵՑՆԵՐԻ ԹԻՎԸ ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Աղյուսակ № 26

Թվական	Արական	Խռական	Ցերկու սեսը միասին
1897	44,99	21,89	36,22
1922	63,83	45,17	54,42
1926	75,46	55,18	65,96

Ամենից առաջ տեսնում ենք, վոր գրագետների թվին արական և խռական սեսի մեջ 1897 և 1926 թվերին բոլորովին տարբեր գիծակ ունեցին։ 1897-ին յերկու արական գրագետների սույնինիկ մեջ խռական գրագետ ել չեր ընկնում։

1922 թվին արգեն յերեք արական գրագետի զիմաց ունենք յերկու խռական դրագետ։ 1926 թվին մելաստի ծալքերն արգեն մոտենում են իրար, և յոթ գրագետ արականի զիմաց ունենք 5 գրագետ՝ խռական սեսից։

1897 թվին արական սեսի մոտ կիսից ավելին անգրագետ է յին՝ 55,01 տոկոս։ 1922 թվին կշիռը փոփովում է գրագետների կողմէ և 100 արականից անգրագետ են մնում միայն 36,17 տոկոս, 1926 թվին այդ տոկոսն ավելի փոքրանում է՝ հասնում և 24,54 տոկոսի։

իգական սեռի մեջ, թե 1897 թվին և թե 1922 թվին անզրագետները կազմում եյին մեծամասնություն, 1897 թվին՝ 78,11 տոկոս, իսկ 1922 թվին՝ 54,83 տոկոս :

1926 թվին խորհրդային կուլտուրայի ազգեցությամբ իգական սեռի մեջ անզրագետների տոկոսն զգալապես ընկերում—հասնում է 44,82 տոկոսի :

Անշուշտ, թե արական և թե մանափանդ իգական սեռի անզրագետների տոկոսը զեր չառ բարձր և մնացել 1926-ին և խորհրդային շինարարության հետապա չքանին (1926—1930 և 1930—1933) և մնում այդ ուղղությամբ ևս խորակել խոչընդուներն ու անզրագետների թիվը հասցնել մինիմումի :

Թեև չունենք տվյալներ նախ քան պատերազմը (1914 թ.), Դաշնակցության չքանին (1919—20 թ. թ.) և ներկայիս (1930 թ.) գրագետների տոկոսները հաշվեռու, բայց չիմնելով մոտավոր յենթագետությունների վրա, կարելի յէ յենթագրել, վոր գրագիտության տոկոսներն եյին՝ 1914 թ. 45 տոկ., 1919 թվին 50 տոկ., 1930 թվին 80 տոկոս :

Անցնելով գրագետների թվի ընդհանուր աճման՝ տեսնում ենք, վոր 1897-ին 100-ից զբագետ եյին միայն 36,22 տոկոսը, իսկ 1926-ին՝ 65,96 տոկոսը, գրեթե կրկնապատճելը :

Մինչդեռ 1897 թվից մինչ 1922 թիվը գրագետների թիվը պարզ հաշվարկումով ավելանում և տարեկան 100 հոգուն միայն 0,7 հոգի, 1922—1926 խորհրդային շինարարության չքանում արդեն 100 հոգուց տարեկան գրագետ են դարձել 2,6 հոգի, այսինքն՝ 4 անգամ ավելի արագ քան նախախորհրդային չքանում :

Գրագետների թիվը, ըստ ազգությունների, մեծ հակառակություններ և տալիս, վորին իր ապացույց, մեջ ենք բերում համեմատական տվյալներ :

ԳՐԱԶԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 100 ԱՆՁԻՆ, ԲԱՏ ԱԶԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
(8-ից բարձր տարիքի անձնուց մեջ)

Աղյուսակ № 27

Աղյուսակի թիվը	1897			1922			1926		
	Արտկան	Իգական	Սեռի միավոր	Արտկան	Իգական	Սեռի միավոր	Արտկան	Իգական	Սեռի միավոր
Հայ	54,15	28,03	43,89	67,44	48,96	58,11	78,15	57,54	68,52
